ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2023 թվականի թիվ 214- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ԲՈՒՍԱԾԱԾԿ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՀՐԴԵՀԱՎՏԱՆԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ, ՀՐԴԵՀՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՐԱԳ ԱՐԾԱԳԱՆՔՄԱՆ, ՀՐԴԵՀՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ, ԴՐԱՆՑ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը, 19-րդ հոդվածը և ՀՀ Վարչապետի 2023 թվականի օգոստոսի 7-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» թիվ 817-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի նիստի թիվ 1 արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Տավուշի մարզում անտառային և բուսածածկ տարածքների հնարավոր հրդեհավտանգ իրավիճակների մշտադիտարկման, հրդեհների կանխարգելման, անհրաժեշտ կարողությունների գնահատման, արագ արձագանքման, հրդեհների դեմ պայքարի, դրանց տարածման կանխման, ինչպես նաև դրանց հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մարզի անտառածածկ և խոտածածկ տարածքներում իրականացնել ուսումնասիրություններ և վեր հանել առկա խնդիրները:

3. Աշխատանքային խմբի անդամներին՝ մեկշաբաթյա պարբերականությամբ, յուրաքանչյուր հինգշաբթի ՀՀ ՆԳՆ ՓԾ Տավուշի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել առկա խնդիրները, դրանց լուծման համար առաջարկվող ուղիները և տեղեկատվություն՝ կատարված աշխատանքների վերաբերյալ:

4. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ ամփոփել ստացված տեղեկատվությունը և ներկայացնել Տավուշի մարզպետին:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

22.08.2023

X

ք. Իջևան
21 օգոստոսի 2023թ.

Հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի
21 օգոստոսի 2023 թվականի թիվ 214 որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀՀ Տավուշի մարզում անտառային և խոտածածկ տարածքների հնարավոր հրդեհավտանգ իրավիճակների մշտադիտարկման, հրդեհների կանխարգելման, անհրաժեշտ կարողությունների գնահատման, արագ արձագանքման, հրդեհների դեմ պայքարի, դրանց տարածման կանխման, ինչպես նաև դրանց հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման աշխատանքային խմբի.

Աշխատանքային խմբի ղեկավար՝
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության պետ,
Անդամներ՝
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻ հարցերի վարչության պետ
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան, Բերդ համայնքների ղեկավարներ
ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Տավուշի տարածքային բաժնի պետ
ՀՀ ՇՄՆ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Տավուշի տարածքային բաժնի պետ
ՀՀ ՇՄՆ <<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի, <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի <<Իջևանի անտառտնտեսություն>>, <<Սևքարի անտառտնտեսություն>>, <<Նոյեմբերյանի անտառտնտեսություն>>, <<Արծվաբերդի անտառտնտեսություն>> մասնաճյուղերի տնօրեններ:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

21.08.2023

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN ARMAN 2412760241